



## Պարույր Սևակ

### Ներում եմ

Ես չե՞մ հարզում, ճիշտ հասկացեք,

Ես չե՞մ հարզում,

Բայց ներում եմ ջահելներին՝

Երբ զուր տեղը կոխվներ են նրանք սարքում -

Մեղավոր է հորդող ուժի ավելցուկը:

Ես չե՞մ հարզում, ճիշտ հասկացեք,

Ես չե՞մ հարզում,

Բայց ներում եմ ահելներին՝

Երբ ասում են շատ լրջորեն,

Հետն էլ տնքում.

-Բա սա ձո՞ւկ է: Մեր ժամանակ լա՛վն էր ձուկը...

Ես ներում եմ

Օտար երկրում լիազորված հայրենասեր այն դեսպանին,

Որ հայրենիք տանող ճամփա չի հարցընում՝

Իմանալով, որ իր դժբախտ հայրենիքում վիշապացել

Ու խժողում է բռնակալի դեռ երեկվա բարակ օձը:

Այսպես՝ նաև ես ներում եմ ինքնասպանին,

Թե մի քնած ժողովուրդ է արթնացընուս

Նրա միակ կրակոցը...

Ու ներում եմ գլխացավը՝

Թե ծագում է տարիքն առած կուսությունից,

Գլխացավանքն անակընկալ՝

Թե գալիս է հաջող շանցած քսությունից.

Եվ այն ցավը,

Որ արդյունք է սիրո անուշ հիվանդության,

Եվ այն հիվանդ սովորույթը,

Որ ծնունդ է ավանդության:

Թռող որ ներվի

Նաև սուտը անմեղունակ,

Ամեն կոպիտ անմեղ հանաք,

Ամեն ամապ օր ու եղանակ:

Եկեք նաև մի՛ նեղանաք,

Թե սիրում են՝ ցույց չեն տալիս,

Բայց մի՛ ներեք,

Թե ցույց տալիս, բայց չեն սիրում:

Եկեք նաև նրա՛ն ներենք,

Ով լուս է հարկադրված,

Սակայն գոնե փրփրում է,

Բայց ոչ նրան,

Ով դավում է

Եվ ցավում է՝ հարկադրված...

Ես չներե՞մ երեխսերին, եթե նրանք

Եվ բանկարժեք իր են կոտրում,-

Թռող սպառնան մինչև անզամ և լուսնյակի՛ն:

Ես կներեմ ամե՛ն տեսակ ձեռնածություն ու հնարանք-

Եթե նրանք

Երեխայի սրտաճմիկ լացն են կտրում,

Երեխայի լացն են կտրում, բայց ոչ խարում

Դավաճանած եղջյուրակիր ամուսնյակին...

Երբ ենք ներում կամ չենք ներում,

Հասկանո՞ւմ եք:

Մենք ներում ենք  
Ամե՛ն անգամ  
Ու լոկ այնքա՛ն,  
Որքանով որ կատարվածը հասկանում ենք:

29.V.1957թ. 10.VI.1957թ. 21.XI.1957թ.

Մուկվա